ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-**423**-23.12.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
<<ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 14-րդ հոդվածի 2-րդ մասը <<ապահովման>> բառից հետո լրացնել <<, <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, այդ թվում՝ տրանսպորտի տեխնիկական սպասարկման և նորոգման, արարողակարգային, այդ թվում՝ պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների նպատակով միջոցառումների սպասարկման>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության դիտողությունների և առաջարկությունների մասին

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1. ՀՀ կառավարություն	Նախագծի առաջին հոդվածում «արարողակարգային » բառից հետո հանել «ծախսերի» բառը:	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն: